ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"11" սեպտեմբերի 2015թ. № 115- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի № 193-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. օգոստոսի 31-ի թիվ 1/32.2/12506-15 գրության,

ո ր ո շ ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2009թ. դեկտեմբերի 1-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային առանձին ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին>> թիվ 193-Ա որոշման N 6 հավելվածի <<Բաժնի գործառույթները>> բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

II. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժինն իր լիազորությունների շրջանակներում՝

1) ապահովում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրի մշակման աշխատանքները.

2) ցուցաբերում է աջակցություն համայնքների ղեկավարներին՝ համայնքային զարգացման ծրագրերի կազմման գործընթացում.

3) ապահովում է մարզի փոքր և միջին ձեռնարկությունների և ձեռնարկատիրական համակարգի աշխատանքների մասին տեղեկատվության վերլուծությունը.

4) ապահովում է մարզի տարածքում գործող արդյունաբերական կառույցների աշխատանքի համակարգումը, նպաստում և աջակցում նրանց նպատակային գործունեության իրականացմանը, աջակցում և խրախուսում է նոր արդյունաբերական կառույցների և հանգույցների ստեղծմանը, տեղեկատվական գործառույթների իրականացման աշխատանքները իր իրավասության սահմաններում, ապահովում է նրանց կապը շուկայի հետ.

5) ապահովում է մարզի սոցիալական աջակցության պետական ծրագրերի իրականացումը, աջակցություն է ցուցաբերում սոցիալական ծառայություններ

տրամադրող կազմակերպություններին՝ սոցիալական ծրագրեր իրականացնելիս.

6) առևտրի, հանրային սննդի և սպասարկման բնագավառներում ապահովում է մարզի տարածքում ոլորտի տնտեսվարող սուբյեկտների գործունեության ընդլայնումը և արդյունավետությունը.

7) ապահովում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրի մոնիտորինգի իրականացումը.

8) ապահովում է մարզպետարանի, մարզպետարանի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսեր ունեցող իրավաբանական անձանց հիմնական միջոցների վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն.

9) ապահովում է մարզի համայնքների կողմից ներկայացվող առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն.

10) մասնակցում է արտասահմանյան գործարարների հետ գործնական հարաբերությունների ստեղծման և դրանց զարգացման գործընթացին.

11) ապահովում է անհրաժեշտ աջակցություն մարզային ենթակայության կազմակերպությունների պետական գույքի օտարման գործընթացին, գույքագրման և աճուրդային հանձնաժողովների աշխատանքներին.

12) սահմանված կարգով մասնակցում է Բաժնի իրավասությանը պատկանող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) նախագծերի մշակմանն ու քննարկմանը.

13) կազմակերպում է քաղաքացիների և իրավաբանական անձանց՝ Բաժին հասցեագրված նամակների (դիմումներ, բողոքներ, առաջարկություններ) քննարկումը և օրենքով սահմանված ժամկետում ապահովում դրանց ընթացքը.

14) իրականացնում է իրավական այլ ակտերով սահմանված՝ բաժնի գործունեության հետ կապված այլ գործառույթներ:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ. սեպտեմբերի 11
ք. Կապան